ՀՀ ԷԵԲՊՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ
ВОДНОГО ХОЗЯЙСТВА МЭИПР РА

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
"ДЖРАР"

ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8ա
(6-րդ հարկ)
հեռ. 012-74-00-77
էլ. փոստ. sevan_hr.axo@mail.ru

02.05.17թ. N: 259

«ԱՐԵՎՇԱՏԻ ՍԱՐԳԻՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացրած գրությունը, հայտնում եմ, որ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով «Ավտոպահեստամասերի» ձեռքբերման գնահատող հանձնաժողովն իր գործունեությունն իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 5-րդ չափաբաժնի մասով էականորեն տարբերվում էր մնացած մասնակիցների գնային առաջարկից, գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին չճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ մասնակցի հայտը կազմվել էր ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով «Ավտոպահեստամասերի» ձեռքբերման հրավերի պահանջներին համապատասխան, իսկ ցածր գնային առաջարկի վերաբերյալ գնահատող հանձնաժողովը իրավունք չունի մասնակցից պարզաբանումներ պահանջելու և որոշումներ կայացնելու: Եթե մասնակցի գնային առաջարկում որևիցէ անհամապատասխանություն հայտնաբերվեր, մասնակցի հայտը կմերժվեր: ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով «Ավտոպահեստամասերի» ձեռքբերման գնահատող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 30-ին կայացած նիստում «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով : ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի պահանջներին համապատասխան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և

հարցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե: Մասնակցի կողմից ներկայացված տվյալները համապատասխանել են իրականությանը և գնահատող հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 6-ին կայացած նիստում մասնակիցը ճանաչվել է ընտրված:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի՝ *Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի՝ *Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:*

Տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված գրությունը դիտվել է որպես 2017 թվականի ապրիլի 14-ին «Ջրառ» ՓԲ ընկերության և «Արևշատի Սարգիս» ՍՊ ընկերության միջև կնքված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7-03 ծածկագրով ավտոպահեստամասերի գնման պայմանագրի (Պայմանագիր) լուծման առաջարկ, քանի որ պայմանագիր կնքելուց հետո իրավունք չունենք ավելացնել պայմանագրի գինը անփոփոխ թողնելով գնման առարկայի քանակը: Դա հակասում է ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 60-րդ կետին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Միաժամանակ հայտնում եմ, որ Պայմանագրի 7.2 կետի համաձայն անհրաժեշտ է 1080 (հազար ութսուն) ՀՀ դրամ փոխանցել «Ջրառ» ՓԲ ընկերության 11500846892400 հաշվեհամարին որպես տույժ և վճարել պայմանագրի կատարման ապահովումը:

Հարգանքով

Տնօրենի պաշտոնակատար՝ Կ. Եփրեմյան

Կատ՝. Ն. Նիկոլայան
Հեռ. 012-74-00-77